ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/21

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն
Մասնակից՝ «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ տնօրեն՝ Ա. Հարությունովի, ներկայացուցիչ՝ Ս. Ղազարյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020/ՃՈ-39/ԳՐԵՆԱԿԱՆ» ծածկագրով գնանշման հարցում, գրասենյակային նյութերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 01.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1217-2020 գրությամբ «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 31.01.2020թ.ի թիվ 3/27-2811-20 գրության հիման վրա, 01.02.2020թ.-ին «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 01.02.2020թ.-ին և նույն օրը կայացված որոշմամբ գործը ընդունվել է վարույթ:

05.02.2020թ.-ին նշանակվել է նիստ և նույն օրը Բողոքի քննությունն ավարտվել է:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 02.03.2020թ.-ին:

2. ՀՀ ոստիկանությանն ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանությունը 31.01.2020թ.ի թիվ 3/27/2811-20 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացրել է թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020/ՃՈ-39/ԳՐԵՆԱԿԱՆ» ծածկագրով գնման ընթացակարգի փաստաթղթերը և «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

Ի լրումն վերոնշյալ գրության Պատվիրատուն 19.02.2020թ.-ի գրությամբ հայտնել է, որ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ- 2020/ՃՈ-39/ԳՐԵՆԱԿԱՆ» ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ-ին ուղարկվել է ծանուցում ժամկետանց հարկային պարտավորության վերաբերյալ 23.01.2020թ.-ին Մասնակցի դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեին, իսկ արձանագրությունը նշված օրը հրապարակվել է տեղեկագրում: Մասնակցին տրվել է երեք աշխատանքային օր անհամապատասխանության շտկման համար, սակայն շտկում չի կատարվել:

Պատվիրատուն նաև նշել է, որ ՀՀ կառավարության 526-Ն որոշման 47-րդ կետի համաձայն մասնակիցը ծանուցվել է էլեկտրոնային եղանակով:

3. <u>«Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 01.02.2020թ.-ի գրությամբ դիմել է «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1217-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում կամ կարծիք:

Ներկայանալով 05.02.2020թ.-ին հրավիրված նիստին, «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ-ի տնօրենը հայտնել է, ՀՀ ոստիկանության կողմից ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ նամակ չի ստացվել:

4. <u>ՍՑ-LO-2020/21 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ ոստիկանության կողմից գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով 18.12.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020/ՃՈ-39/ԳՐԵՆԱԿԱՆ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 08.01.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և բոլոր չափաբաժինների մասով գնային առաջարկներ ներկայացրած բոլոր բավարար գնահատված մասնակիցների հետ, իրենց ներկայացրած համապատասխան չափաբաժինների մասով գների նվազեցման նպատակով վարել միաժամանակյա բանակցություններ:

Հանձնաժողովի 20.01.2020թ.-ի կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի թիվ 27-րդ և 28-րդ չափաբաժինների մասով «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է հարցում ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Հանձնաժողովի 22.01.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ ՀՀ ՊԵԿ-ի կողմից 22.01.2020թ.-ին տրված տեղեկատվության համաձայն, «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (24.12.2019թ.-ին) ունի 311 978 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ, ուստի Հանձնաժողովը կողմից Մասնակցին տրվել է երեք աշխատանքային օր ժամանակ շտկումը կատարելու համար:

Հանձնաժողովի 29.01.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Մասնակցի կողմից շտկում չի իրականացվել:

Բողոքներ քննող անձը 10.01.2020թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/3355-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն և խնդրել է հայտնել ՀՀ ոստկանության կողմից «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020/ՃՈ-39/ԳՐԵՆԱԿԱՆ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 22.01.2020թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Ընկերության info@mcs.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվե՞լ է ծանուցում, թե ո՞չ: Եթե ծանուցումն ուղարկվել է, ապա խնդրել է հայտնել, Ընկերության կողմից ծանուցումը ստացվել է, թե ո՞չ:

Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 17.02.2020թ.-ի թիվ Ն/26-1/3896-2020 գրությամբ հայտնել է, որ էլեկտրոնային գնումների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020/ՃՈ-39/ԳՐԵՆԱԿԱՆ» ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ-ին ոչ ավտոմատ ծանուցման եղանակով էլեկտրոնային ուղերձ նամակներ չեն ուղարկվել:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1217-2020 գրությամբ «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետի համաձայն՝ … գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝ հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը …

3) էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

4) էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ … անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Եթե կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը վերաբերում է՝

ա. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորություններին, ապա անհամապատասխանությունը համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը,

բ. «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, ապա արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացվելու, այնպես էլ՝ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ կառավարության 06.04.2017թ.-ի թիվ 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կարգը հաստատելու մասին» կարգի՝ 16-րդ կետի համաձայն հրավերով նախատեսվում է, որ՝

1) բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ընթացակարգով գնումների կատարման դեպքի, գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը պահանջվող փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուղարկում է հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին: Քարտուղարը պարտավոր է մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերն ստանալու օրը հաստատել դրանց ստանալու հանգամանքը՝ հրավերում նշված իր էլեկտրոնային փոստից մասնակցի էլեկտրոնային փոստին հավաստում ուղարկելու միջոցով:

Ընթացակարգի հրավերի 7.18-րդ կետի համաձայն՝ կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու, ինչպես նաև առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ապրանքի ամբողջական նկարագիրը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև կոմիտեի տրամադրած տեղեկատվությունը պարունակող փաստակենցաղային նյութերի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով կոմիտե հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ինչպես նաև էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ հայտը գնահատվում է բավարար, եթե ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Այն դեպքում, երբ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատաս-խանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝

առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ ոստիկանության կողմից գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով 18.12.2019թ.-ին հայտարարված «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020/ՃՈ-39/ԳՐԵՆԱԿԱՆ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 20.01.2020թ.-ի կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի թիվ 27-րդ և 28-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է հարցում ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Հանձնաժողովի 22.01.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ ՀՀ ՊԵԿ-ի կողմից 22.01.2020թ.-ին տրված տեղեկատվության համաձայն, «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (24.12.2019թ.-ին) ունի 311 978 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ, ուստի Հանձնաժողովը կողմից Մասնակցին տրվել է երեք աշխատանքային օր ժամանակ շտկումը կատարելու համար:

Հանձնաժողովի 29.01.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Մասնակցի կողմից շտկում չի իրականացվել:

Բողոքներ քննող անձը 10.01.2020թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/3355-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն և խնդրել է հայտնել ՀՀ ոստկանության կողմից «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020/ՃՈ-39/ԳՐԵՆԱԿԱՆ» ծածկագրով ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի քարտուղարի կողմից 22.01.2020թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Ընկերության info@mcs.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվե՞լ է ծանուցում, թե ո՞չ: Եթե ծանուցումն ուղարկվել է, ապա խնդրել է հայտնել, Ընկերության կողմից ծանուցումը ստացվել է, թե ո՞չ:

Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 17.02.2020թ.-ի թիվ Ն/26-1/3896-2020 գրությամբ հայտնել է, որ էլեկտրոնային գնումների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020/ՃՈ-39/ԳՐԵՆԱԿԱՆ» ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ-ին ոչ ավտոմատ ծանուցման եղանակով էլեկտրոնային ուղերձ նամակներ չեն ուղարկվել:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին ծանուցում ուղարկված լինելու վերաբերյալ ապացույց առկա չէ: Ընդ որում՝ ՀՀ ֆինանսների նախարարության 17.02.2020թ.-ի թիվ Ն/26-1/3896-2020 գրությամբ հավաստվում է, որ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020/ՃՈ-39/ԳՐԵՆԱԿԱՆ» ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ-ին ոչ ավտոմատ ծանուցման եղանակով էլեկտրոնային ուղերձ նամակներ չեն ուղարկվել:

Ինչ վերաբերում է, գործում առկա Պատվիրատուի 19.02.2020թ.-ի գրությանը, առ այն, որ՝ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020/ՃՈ-39/ԳՐԵՆԱԿԱՆ» ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ-ին ուղարկվել է ծանուցում ժամկետանց հարկային պարտավորության վերաբերյալ 23.01.2020թ.-ին Մասնակցի դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեին, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ գործում առկա՝ Պատվիրատուի կողմից ներկայացված էլ. հասցեի ծանուցման արտատպումից չի երևում Ընկերության info@mcs.am էլեկտրոնային փոստի հասցեին ծանուցում ուղարկելու հանգամանքը, որպիսի պայմաններում չի ապացուցվում մասնակցին ծանուցում ուղարկված լինելու փաստը:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Միաժամանակ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ծանուցման էությունը կայանում է և ուղղված է Մասնակցին որոշակի հանգամանքների վերաբերյալ

իրազեկելուն, տեղեկատվություն տրամադրելուն և բովանդակության ամբողջությանը հասու դարձնելուն:

Բողոքներ քննող անձն ամփոփելով վերոգրյալ դիրքորոշումը, եզրահանգում է նաև, որ թեև օրենսդիրը հստակ չի սահմանում, թե ծանուցումն ինչպիսի՞ բովանդակություն պետք է պարունակի, սակայն միանշանակ է այն, որ ծանուցումը պետք է լինի այնպիսի, որ հնարավորություն կտա իրապես պարզելու դրանում պարունակվող հանգամանքը (ները), և մասնակցի կողմից ծանուցման հետ ծանոթանալու իրական հնարավորություն ստեղծվի: Այսինքն՝ մասնակիցների համար ծանուցումն իրական հնարավորություն պետք է ապահովի տիրապետելու դրա բովանդակությանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ հանձնաժողովի քարտուղարը պարտավոր էր էլեկտրոնային եղանակով ծանուցեր առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Հանձնաժողովի քարտուղարը չի ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ խախտելով Կարգի 47-րդ կետի և ՀՀ կառավարության 06.04.2017թ. թիվ 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կարգը հաստատելու մասին» կարգի 16-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջները: Ուստի «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ-ի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից 29.01.2020թ.-ի թիվ 5 արձանագրությամբ կայացված

որոշումն ոչ իրավաչափ է (արձանագրությունը չի պարունակում հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշում), իսկ նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1217-2020 գրությամբ «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/21 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**